


ՊԱՅՄԱՆՔ

Յարեհանդիսն և Պայտոյն 8 Մէճ  
Պաւստայ 40 Մէճ  
Վեցամեայ և Պայտոյն 4 Մէճ  
Պաւստայ 5 Մէճ  
Իւրաքանչիւր թերթի գին 60 Քր.  
Կանուցման տողը մէկ անգամի հա-  
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-  
մար 2 դուրուշ, աւելի անգամներու  
համար զատ սակարկութիւն կըլլայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 23 ՄԱՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Անդրիայ տէրութեան կողմանէ  
Աշանթացւոյ թագաւորին դէմ զըր-  
կում զօրաց հրամանատար Սըր  
Կարմէթ վօլթի զօրապետին իւր զօ-  
րաց և աղայից մեծազոյն մասին հետ  
յաղթանակաւ Անդրիայ վերադար-  
ձաւ:

Վօլթի զօրապետը նշանաւոր կեր-  
պիւս պատճեց Աշանթացիներն և ա-  
նոնց թագաւորը, որոյ փառաբան անուն  
մայրաքաղաքն ալ հրոյ ճարակ ը-  
րաւ: Անդրիայի լուսաւորներն այս  
քաղաքն իւրեւ գաղթելի մարգարո-  
հերու կեղծոն մը կը նկարագրեն:  
Յօմանա անուն տեղին Աշանթացւոյ  
թագաւորին հետ 1874 Վեպրիլար 13  
թուականաւ դաշնագրութիւն մը  
կնքուեցաւ, որով երկուստեք մը շ-  
արնջեանուր խաղաղութիւն կը հաս-  
տատուի: Աշանթացւոյ թագաւորը  
կը խոստանայ 50,000 ունկի դուա սո-  
կի վճարել Անդրիայ, 1000 ունկին  
կանխիկ տալու և մնացեալն ալ Անդ-  
րիայ տէրութեան կողմանէ սահման-  
եալ ժամանակները վճարելու պայ-  
մանաւ: Աշանթացւոյ թագաւորն իր  
և յաջորդացը կողմանէ յանձնառու  
կըլլայ Անդրիայ հպատակ և դաշնա-  
կից եղող ցեղերէ բնաւ երբեք հարկ  
կամ նուէր չ'պահանջել, անոնց վը-  
րայ իշխանական իրաւունքներէ բո-  
ւրոյն հրաժարել, և կատարեալ ա-  
ռեւարական ազատութիւն հաստա-  
տել ծովերէնց Անդրիական դադ-  
թականութեանց և փռմասի մէջ:  
Այս դաշնագրութեան մէջ քաղաքա-  
կըրթութեան նկատմամբ դաշնութեան  
արժանի յօդուած մ'ալ կայ, որ մար-  
դապետներու սովորութեան բարձման  
կը վերաբերի: Եթէ Աշանթացւոյ  
թագաւորն այս յօդուածը ճշդիւ  
դորձագրէ, Անդրիայ ընդհանուր  
մարդկութեան, և մանաւանդ քա-  
ղաքակիրթ աշխարհին շնորհակա-  
նայն արժանի պիտի ըլլայ:

Անդրիայ տէրութեան մէկ գեւ-  
պանն ալ Ասիայ խորքը ֆաշկարի ճա-  
ճիկ խանին երկիրը հասաւ անցեալ  
դեկտեմբեր ամսոյ մէջ, և պատուա-  
ւոր ընդունելութիւն գտաւ: Այս խա-  
նը, Եագուպ պէյ, քանի մը տարիէ  
ի վեր մեծ մասամբ Չինաստանէն  
բաժնուած երկիրներէ նոր կառա-  
վարութիւն մը կողման, և կեդրո-  
նական Ասիայ մէջ մեծ համբաւ հա-  
նած է: Անցեալ տարի իւր կողմանէ  
դեկտեմբեր ամիսին կը մայրաքաղաքս,  
ուր ամիսներով կենալէ վերջը չ'ընդ-  
կատանի ճանքով վերադարձաւ: Ան-  
կէ շնորհատունի փոխարքայն ալ ֆաշ-  
կարի գեւապանին հետ ընկերութեամբ

Անդրիական տէրութեան կողմանէ  
գեւապան մը զրկեց ի ֆաշկար թա-  
գաւորին նամակաւ և ընծայելով  
որք հանդիսաւոր կերպիւ խանին  
ներկայացուեալ են: Անդրիայի գեւ-  
պանը, Պ. Յօրսիթ, իւր նամակին մէջ  
կը ծանուցանէ թէ Ռուսիոյ սահմանը  
ֆաշկարէն վեց եօթն անուր ճանքայ  
հեռի է, և թէ այն հեռաւոր եր-  
կիրներուն մէջ Ռուսիոյ տէր տիրած է:  
Ֆաշկարի խանն իւր երկրին մէջ Օս-  
մանեան դրօշը պարզեց է, և մէկ  
կողմը Օգոստոս Սուլթանին և միւս  
կողմն ալ իւր անուամբ դրամ կո-  
խել տուեալ է:

Կարկաթայէն խոնուած լուրերը  
Հնդկաստանի մէջ տիրած սովին վը-  
րայ խիստ տխուր տեղեկութիւններ  
կուտան: Սով դանուած գաւառաց  
մէջ թշուառութիւնը վերջին տարի-  
ճանի հասած է: Թէրհուլթ անուն գա-  
ւառին մէջ ուռեւոտ ստանալու հա-  
մար սովալուկներու օգնէ ընկերու-  
թեանց դիմող անձանց թիւը 20,090  
էն ատեն աւելը մէջ 100,000ի հասեր  
է: Այս անձինք բոլորն ալ յեթին  
կարօտութեան մէջ են, բայց նա-  
խամեծար կը համարին աշխատու-  
թեամբ իրենց ապրուստ մը վստա-  
կիլ քան թէ աղքատացնելուն եր-  
թալ: Երբ չորս հարիւր հոգի անօ-  
թութենէ մեռած են: Ուրիշ գա-  
ւառաց մէջ ալ սովի պատճառաւ մա-  
հերը բազմանալու վրայ են: Ծուծ  
բարուսի հիւսիսային կողմի ժողո-  
վուրդը տէրութեան նպատակը կող-  
բի Ռուսիոյ մէջ մեծամեծ նպատա-  
նէր ու օգնութիւններ կը բաշխուին,  
և օժանդակող ընկերութիւնները  
չորս հարիւր հազար հոգիի դրօժ և  
ուճիկ մատակարարելու կը պարտա-  
ւորին: Հնդկաստանի սովն Եւրոպա-  
յի մէջ ալ ստակի նուազութեան գըլ-  
խաւոր պատճառներէն մին կրնայ  
համարուիլ, քանզի Անդրիայ կառա-  
վարութիւնն արդէն չափ մեծ գու-  
մարներ Հնդկաստան զրկեց, և մէկ  
կողմէն ալ զրկելու վրայ է: Հնդկի-  
ներն դրադեցնելու համար կարեւոր  
չ'ընդունեցին ալ ձեռնարկուած է,  
որք մեծագուծար ստակ կը պահան-  
ջեն:

Եւրոպական լուրերն այս միջոցիս  
խիստ հանդարտ են: Լրագիրք Նա-  
բոլէնի Գի որդւոյն հափադատութեան  
տալիս Չիլիքըթի մէջ կատարուած  
հանդիսին նկարագրութիւնը կընեն:  
Այս տալիս բաղմամբ անձինք Գաղ-  
ղիայէն Չիլիքըթի տարանքը դա-  
ցեր էին, մեծ մասամբ կայսրութեան  
ժամանակի պաշտօնատարներ, որք  
իրենց ապրուստը կամ վերստին պաշ-  
տօնատարութիւնը բնականաբար  
կայսրութեան վերականգնութեան  
կ'ապանեն: Բայց ասոնց մէջ էր Ժէ-  
րոմ—Նաբոլէնի իշխանը, որ ինչպէս

յայտնի է, Լոփէնի կայսրուհոյն և  
անոր որդւոյն կուսակցութեան բաժ-  
նուելով առանձինն իշխանութեան  
հետամուտ է:

Բառուայի գուքն ուղերձ մը  
կարդաց Նաբոլէնի որդւոյն, որոյ  
մէջ կըսէր. «Գաղղիոյ մէջ կուսակցու-  
թիւններն իրենց կարծիքը կ'ապրա-  
ծեն, և յաղթանակ տանել կը ջա-  
նան: Բայց մեք կրնանք լուծիւն  
պահել Նաբոլէնեան կայսրութեան  
դաւալ Գաղղիոյ մէջ շատ ընդարձակ  
տեղ մը կը բռնէ: Օրինաց սահմանէն  
անդին յանցնելու որոշում տուած ենք,  
բայց իրաւունք ունինք անցեալը յի-  
շուել, մեր երկրին զգացումները քն-  
նելու և մեր ներքին համադրմանը  
յայտնելու՝ երեսուն տարիէն աւելի  
ներկայ դաւալ մէջ թագաւորած  
կայսրական գերազատութեան ժառան-  
գին առջև:» Կայսերական իշխանը  
պատասխանեց՝ շնորհակալութիւն  
յայտնելով և միանգամայն ծանուցա-  
նելով որ եթէ Գաղղիա ընդհանուր  
քուէարկութեամբ զինքն ի դահ  
հրաւիրէ, պատրաստ է ընդունելու:

Այս ճառը, որ անշուշտ Պ. Ռուէի  
վարդէա գրչէն ելած է, խիստ ճար-  
պիւղութեամբ շարագրուած է, մա-  
նուանդ հետեւեալ հատուածն ուր  
Մարք—Մարտի մարաջատին վրայ  
գովեստով խօսուած է. «Գաղղիոյ մէջ  
անդորրութիւնը՝ հօրս փառաց եւ  
դ ժբարդութեան հին ընկեր Մաճէն-  
թայի դրօշն որոյն շնորհիւ կը պաշտա-  
պանուի» Այս և ուրիշ հատուածներ  
ծափահարութեամբ ընդունուեցան:

Այս ցոյցին վրայ լրագրաց կար-  
ծիքն իրարմէ տարբեր է: Բնակա-  
նաբար կայսերական կուսակցութեան  
վերաբերեալ լրագիրները կը հըրճ-  
ւին. բայց հանրապետական, Պուր-  
պանեան և Օրլէանեան կուսակցու-  
թեանց լրագիրները կայսրութիւնն  
անուանարկելու համար նորէն ստատիկ  
յօդուածներ գրել սկսան: Բայց ինչ-  
պէս անդրիական լրագիրներէն ու-  
մանք դիտելու կուտան, անձխտելի է որ  
Պոնաբարթութեամբ աւելի սկզբունքով  
կը շարժին. քանզի ընդհանուր քը-  
ւէարկութեամբ աղղային կամքը հար-  
ցնել և տեական կառավարութիւն  
մը հիմնել կը պահանջեն, մինչդեռ  
ներկայ կառավարութեան առժամա-  
նական ըլլալէն ամենայն ոք ձանձ-  
բացած է: Ասիկա հարկաւ մեծ ա-  
ռաւելութիւն մը կուտայ Պոնաբարթ-  
եանց, ուստի և վերստին կառա-  
վարութիւնը պարտաւորեալ աւելի  
կտրուկ ընթացք մը բռնել, և ելաւ  
թօթնամեայ նախադասութիւնն հա-  
տատուն պահելու յայտարարութիւն  
ըրաւ: Առ այժմ հանրապետութիւնն  
երթալով կամրապնդի, և երեսփո-  
խանական ընտրութեանց մէջ հան-  
րապետականք յաղթող կեննեն:

ՊԱՅՄԱՆՔ

Գուրա գացած լրագրաց ճան ու  
ճանքը խմբագրութեան վրայ:  
Լրագրոյս վերաբերեալ նամակ  
կամ որ եւ ինչ գրութիւն խմբագիր  
—Տնօրէնին պիտի ուղղուի, և Գու-  
րա, Չիլիքի խան, Մաքիսի գրաւեմ  
եակը:  
Ճամբու ճանքը չ'զմարուած են:  
Ճակ չ'ընդունուիր:

Խաղիոյ մէջ այս օրերս ամենէն  
կարեւոր դէպքն է վիքթոր—Լամա-  
նուէլ թագաւորին դահակալութեան  
քսան և հինգերորդ տարեդարձին  
տալիս կատարուած մեծամեծ հան-  
դէսները: Գրեթէ Խաղիոյ ամեն  
քաղաքներէն պատգամաւորութիւնն  
ներ գնացած էին ի հօմ թագա-  
ւորը շնորհաւորելու համար: Իսկ  
վիքթոր—Լամանուէլ թագաւորն այս  
տալիս իւր խոսած ճառին մէջ յայ-  
տարարութիւն ըրաւ թէ Խաղիոյ  
միութիւնը բոլորովին խաղաղութեան  
նպատաւով է: Միւս կողմանէ ալ  
Աւստրիոյ կայսրը Նոյմարայի պատե-  
րալմին քսան և հինգերորդ տարե-  
դարձին տալիս Ալպէթի արշիդքե-  
սին նամակ մ'ուղղեց, որոյ մէջ յի-  
շուելով որ այն պատերազմին մէջ ար-  
շիդքէին հրամանատարութեամբ Ա-  
ւստրիոյ զէնքերն յաղթական ելած  
էին, շնորհակալութիւն կը յայտնէր  
անոր: Նոյմարայի պատերազմը 1848ին  
տեղի ունեցած էր աւստրիացւոյ և  
այն ժամանակ Սարաւենիոյ թագա-  
ւոր Կարլոս—Ալպէթի մէջ: Այս  
վերջինն յաղթութեամբ հրաժարեցաւ,  
և դահուն հետ մեկտեղ Խաղիական  
Վիտիւնին ի գլուխ հանելու դորձը  
որդւոյն վիքթոր—Լամանուէլի թու-  
գուց: Այս անգամ երկուստեք եղած  
այս ցոյցներն անցեալ տարի Խաղիոյ  
թագաւորին վիճեմա ուղեւորելուն  
տալիս Աւստրիոյ և Խաղիոյ մէջ հաս-  
տատուած բարեկամութիւնը ցրտա-  
ցընելու պատճառ կրնան համարուիլ:

Ուրիշ երկու տէրութիւնք՝ որք  
տան և ութ տարի առաջ իրարու  
անհաշտ թշնամի կրկարծուէին, այ-  
ժմ իրարու ոչ միայն բարեկամ՝ այլ  
և ազգական եղան: Ռուսիոյ կայսրը  
կը պատրաստուի քանի մ'օրէն Անդ-  
րիա երթալու, իւր դատարը՝ Լալին-  
պուրկի դքսուհոյն այցելութիւն և  
Անդրիոյ թագուհոյն հետ տեսու-  
թիւն ընելու համար: Այս առթիւ  
հարկաւ Անդրիայի իրենց սովորա-  
կան հօրրաններով օգեղը պիտի թըն-  
դացնեն: Երբ որ բազմաազատու անոն  
և ութ տարի առաջ Գրքմի դաշտե-  
րուն մէջ երկու աղղաց իրարու դէմ  
մղած արիւնառչա պատերազմն այն  
զուարթ տոներուն հետ՝ որք քանի  
մ'օրէն պիտի կայսրութիւն, անհաշտ  
է չ'մտածել թէ ժամանակիս քաղա-  
քակիրթ աղղաց մէջ պատերազմը  
բոլորովին անօգուտ եղեուն մ'է դը-  
րեթէ, վայրկեական մայրեղնութեան  
յառաջ եկած: ուստի բաւ է որ մա-  
լեղնութիւնն անցնի, որպէս զի հան-  
դարա դատարարութիւնն զիտ  
փոխանակ թնդանութիւնով տղար  
շարդեղու, աւելի բաւ է Ծովանայի  
դաւալմանը իրարու հետ մրցիլ:

Սպանիայէն առնուած լուրերը  
հանրապետական պիտի ց նպատաւոր

են : Հանրապետականաց Գալլէ, 10 դո-  
րապետը մարտի 8ին Միւնիխից իր  
մօտ Գալլէից անց Գալլէ, Ման-  
թէի և Բալթիկի անուն հրամանա-  
տարներուն յաղթեց, որ 9,000 է-  
լայի զօրք ունէին, և զանոնք դէպ  
ի հիւսիս քշեց : Գալլէ, 10 յաղթանա-  
կաւ առաջ երթալու վրայ է : Սէր-  
բանո մարտական ալ զօրքի կըս-  
պասէ Գալլէից անց վրայ յարձակե-  
լու համար :

### ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 5 ապրիլ  
Ամերիկի լրագիրը կառավարութեան  
դէմ բռնէ յօդուածներ հրատարակե-  
լով յիշեալ գաւառը պաշտօնին վիճակի  
մէջ երուեցաւ :

Պրիւսի 2 ապրիլ  
Պրիւսի իշխանին առողջութեան վի-  
ճակն երկուք կը պատճառէ :

Պրիւսի 2 ապրիլ  
Պ. Ռոշֆոր քիչ օրէն հոս կ'ապաստուի :  
Կըսուի թէ Գերմանիոյ դեսպան Պ.  
Պալան ինքզինք թնամաւորեր է :

Սանթամար 2 ապրիլ  
Վերջին կտիւններուն մէջ զգալի կո-  
րուստներ եղան թէ՛ Գալլէից անց և թէ՛  
կառավարական զօրաց կողմէ :

Լոնտոն 31 մարտ.  
Պոմ. Բոն. 40 41/16  
Փոմ. 4865 53  
» 4869 51 3/4  
» 4871 57 1/2  
» 4872 63 1/2  
Անգլ. Բոն. 92 3/16

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական կառավարութիւնը  
Պէ. Երզնկայի պալատը Սէրիկոյ Միւնի-  
խի իշխանին բնակութեան համար պատ-  
րաստել կուտայ : Միւնիխի արտա-  
րողակաւ Սի. Բիլիս պէյ և Վիհ-  
Սուրբանին բանակի օգնականներէն  
մին Բէրթէլ-Բիլիս չորհրդաւ վար-  
նա պիտի երթան իշխանը և Պրիւսի-  
աբերելու :

Չորեքշաբթի իրիկուն Բ. Գոնէն  
հետեւալ աղբարարութիւնը գնաց  
Օրադոյ խմբագրին :

Օրադոյի զանգեթանը Մամպուրթ  
իտարեանուն իտիւն թէնպիւթիւթը  
չիֆայիէ իրկաթնաւ օրարաք, պու-  
քերէ 1192 նիւմէրօյն նիւսիւնիւն-  
տէ Գուրիէ Երթնաւուն նաղէն  
տէրնի մէննու օրան Գալլէի մէնն-  
էնպիւթ սալը պիտի թաղւմ մէգա-  
լաթ մէնն իթիւթ օրադուստան, է-  
կէրիս պու պալատէ քարար իտէնէք  
օրաք իտէ, թալիլ իտիւթէնէ ին-  
թար օրադուստ :

14 Մէքէր 91  
20 Մարտ 90

Գալլէի ժողովի Կիւնիքեւն հա-  
տանանց ձեռքէն առնուելու և կա-  
թիլիկ Հայոց Պատրիարքին յանձնը-  
ւելու խնդրոյն վրայ հետեւալ տե-  
ղեկութիւնները կրկնուցանուց ինքն  
Հէրբու և Լէվիթի թալմի լրագրոց  
մէջ :

Երեքշաբթի օրը, Մարտի 2ին Ան-  
տոն պէյ, որ Գիւնիքեւն Միւ-  
թէի վրէն է, Բ. Գոնէն կանչուելով  
հրաման կըլլայ իրեն որ Գալլէի  
ժողովի Կիւնիքեւն բանակները կա-  
թիլիկ Հայոց պատրիարքին յանձնէ :  
Անտոն պէյ կրկնապատկէ հրապարակ  
կայարքտական հրամանին : Չորեք-  
շաբթի օրը Միւնիքեւն պէյ կրկնապատկէ  
գործոց տեսուչ Չիլիք պէյին, և ու-  
րիշ քանի մ'երեւելեաց հետ կեր-  
թան եկեղեցւոյն բանակներն ստա-  
նուլու և Պատրիարքին երեսփոխանա-  
ցը յանձնելու : Բայց Հատանան կը-  
ղերն և խումբ մ'անձինք, ինչպէս նա-  
և կանայք եկեղեցւոյն մէջ փակուած  
և դռներն ալ դռացած, կրկնապատկէ  
նախ, և ձեռն ուղեր ոչ միայն բռնա-  
լիներն յանձնել, այլ և ոչ իսկ դռ-  
ները բանալ : Անտոն պէյ ալ կրկնա-  
պատկանէ թէ ինքը չիւնար կղերն  
և ժողովրդեան խօսք հասկնել, և  
թէ նոյն առաւօտուն հրաժարած էր  
Միւթէի վրէնէն : Այն ժամանակ  
Բ. Գոնէն լուր գրկուելով, Անտոն  
պէյ հոն կը կանչուի, կրկին հրա-

ման կըլլայ իրեն որ եկեղեցւոյն բա-  
նակներն անպատճառ Պատրիարքին  
յանձնէ : Անտոն պէյ նորէն Գալլէ-  
թիւս կըլլերադաւանայ, և եկեղեցւոյն  
շուրջը խանութ լաղմութեան մէջ  
անցնելով, որոյ մեծ մասը Հիւնիս-  
ցի, Մալթիէ և Սլաւոնիացի էին, և  
միւսերան չէր քաշ, չէր քաշ կը  
գոչէին, հրապարակ կըլլարադաւ-  
անայ պահապաններուն որ դռնը բա-  
նան, բայց ներսէն կանայք մերժողա-  
կան պատասխան կուտան :

Չիլիք պէյ տեսնելով այս ընդ-  
դիմութիւնը, ետ կը քաշուի Բ. Գոն-  
նէն նոր հրապարակ պատկերով :

Հինգշաբթի օրը Հատանան կու-  
տակցութեան գլխավորներէն ութ  
անձինք Բ. Գոնէն կանչուցան :

| ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ<br>ԵՍՏԱՄԵՐ ՈՒՍՈՐԻՄԻԷ |       |              |       |
|--------------------------------------|-------|--------------|-------|
| 22 մարտ                              | ուրաթ | իրիկուն      | 45.20 |
| 23 »                                 | շաբաթ | առաւօտ       |       |
|                                      |       | բացուեցաւ    | 45.24 |
|                                      |       | կէս օր       | 45.22 |
| Կ. Պոլիս 22 մարտ                     |       |              |       |
| Սօսիթէ ժէնէրայի բաժինք               |       | Սիւր. իր. 6. |       |
| « Փոխանակութեան »                    |       |              | 3.30  |
| Կ. Պոլիս Պանթալիս »                  |       |              | 4.2   |
| Քրէսի ժէնէրայ »                      |       |              | 7.23  |
| Քրէսի թաղմ »                         |       |              | 2     |
| Կրկնապատկէ հիւն                      |       | Յոր.         | 99    |
|                                      |       | նոր          | 70    |
| Փոլիս. 4863                          |       | »            | 300   |
| » 4865                               |       | »            | 304   |
| » 4869                               |       | »            | 264   |
| » 4872                               |       | »            | 66    |
| Փոլիս. 4873                          |       | »            | 262   |
| Թրամուէլ                             |       | Օսմ. իր      | 6.    |

| ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱՐԱՆ  |       |        |  |
|-----------------|-------|--------|--|
| 22 ՄԱՐՏ         |       |        |  |
| Անգլ. լուս.     | գրքեր | 444.   |  |
| Նաթ. առ ոսկի    | »     | 88     |  |
| Կիւնիքեւն Ռուս. | »     | 90     |  |
| Գ. Բիլիս        | »     | 51. 20 |  |
| Գ. Նիս          | »     | —      |  |
| Վիլնիս          | »     | 404    |  |
| Պրիւսի          | »     | 423 20 |  |

### Ա. Զ. Գ. Ա. Յ. Ն

Ինչպէս որ ծանուցուած էր, ե-  
րէկ երեսփոխանական Ընդհ. Ժողով  
գումարեցաւ Գալլէի :

Տեղագլխի սրբազանը ներկայ չէր,  
ինչպէս նաև Աստուածատու Վիս-  
Սուրբանի և Եփէնիան, երկուքն ալ  
անձնական ակրաութեան պատճա-  
ռաւ : Բնակի ժողովը Գեր. Թաղմուս  
սրբազանն առօրեայ նախագահ և  
Յովակիմեան Մեծ. Յովհաննէս Եփէն-  
տին ալ աստեանակաւ որոշելով ժամ  
7 1/2ին առեան բացուեցաւ :

Գիւնիքեւն նախ Բ. Գոնէն տեղա-  
պահ սրբազանի հաստատութեան և  
Ընդհ. Ժողովի գումարման համար  
եկած երկու հրամանագիր կարգաց,  
որոց երկուքն մէջ ալ Բ. Գոնէն  
Պատրիարքական ընտրութիւնը փու-  
թացնել կը հրամայէր :

Յետոյ Ամեն. տեղագլխի Ներսէս  
սրբազանի մէկ նամակը կարգացուե-  
ցաւ, որով Ն. սրբազանութիւնը կը  
խնդրէր երեսփոխանական ժողովէն  
որ իր անունը պատրիարքական ըն-  
տրեցաց ցանկէն հանուի և իրեն հա-  
մար քուէ չարուի պատճառելով թէ  
ինքն անկարող է պատրիարքական  
պաշտօնը վարելու և այլն :

Յետոյ Գալլէի ժողովի մէկ  
տեղեկագիրը կարգացուեցաւ, որոյ  
մէջ պատրիարքական ընտրութիւնը  
փութացնելու ասիականացութիւնը  
կը ծանուցանէր հանգրեւձ պատճա-  
ռաւանութեամբ, և Համագումար  
ժողովի պատրաստած եպիսկոպոսոց  
ցանկին հետ իւր որոշած հինգ ընտ-  
րելեաց ցանկը կը ներկայացնէր. մի-  
անգամայն ընտրութեան գործը գիւ-  
րացնելու նպատակաւ ընտրուելիք  
պատրիարքին համար երգման ձև ին-  
խմողութեամբ էր, որով Պատրիարքը  
թէ՛ ներկայ և թէ՛ վերաքննեալ Մահ-  
մանագրութեան ճշդէն գործադրու-  
թեան համար պիտի ուխտէր :

Ամենէն առաջ Բ. Մաղլումեան է-

Ֆէնտի խօսք ուղերով, Մահմանագ-  
րութեան վերաքննութիւնը կատա-  
րելէ առաջ պատրիարքական ընտ-  
րութեան ձեռնարկէն ապագային  
համար օգտակար չտեսաւ, և ըն-  
դարձալ պատճառաբանութեամբ  
առաջարկեց նախ վերաքննութեան  
գործն աւարտել շուտով և յետոյ  
պատրիարքին ընտրութեան ձեռնար-  
կել, և Բերիշ քանի մ'ատենադարձ  
այն կարծիքը պաշտպանեցին :

Փաղ. Ժողովի պատենագրաւ պէյը  
պատասխանելով Պատրիարքին ընտ-  
րութիւնը փութացնելու հարկը ցու-  
ցուց նոյնպէս պատճառաբանու-  
թեամբ, և ինքեւմը գիտողա-  
թիւն ըրաւ թէ վերաքննութեան  
գործն երկար ամիսներ և գուցէ իսկ  
տարիներ չ'աւելուի ո՞վ կրնար երաշ-  
խաւոր ըլլալ :

Ինչպէս որ Եփէնտի խօսք ուղե-  
րով, աւարկեց թէ Ընդհ. Ժողովը  
թէ՛ Պատրիարքական ընտրութեան  
և թէ՛ վերաքննութեան մեծ գործն-  
աւան ձեռնարկելէ առաջ պէտք էր  
նախ ինքզինք կանոնաւորէր. գրեթէ  
տարիէ մ'ընթաց պայմանաւորման լը-  
րացեալ երեսփոխանը գեռ պաշտօն-  
նին կը շարունակէր, և անոնց տեղ  
ժողովրդեան ընտրած բուն երեսփո-  
խանները մինչև հիմա չ'աւերանալով  
ժողովէն բացակայ կը գտնուին. Գի-  
ւնիքեւն երկու տեսնապետները հրա-  
ժարական տուած են, և ժողովը գեռ  
ոչ ընդունած և ոչ մերժած է անոնց  
հրաժարականը, հետեւալը գիւնա-  
նը թերի վիճակի մէջ է : Ասոցմէ  
զատ նախորդ նիստերու աստեանագ-  
րութիւնները գեռ վաւերացած չեն :  
Երեսփոխանական ժողովի պարտքն  
է, ըստ, նախ այս գործերը կար-  
գադրելով ինքզինք կանոնաւորել,  
և ապա կենսական խնդիրները լուծե-  
լու ձեռնարկել :

Մահմանագրութեան վերաքննիչ  
յանձնաժողովի վրայ ալ գիտողու-  
թիւն ընելով ըսաւ թէ անդամաց Յը  
պախելէ ետեւ, միայն 7 անդամաց ըն-  
տրագրութեամբ տեղեկագիր ներ-  
կայացուցած են, որ օրինաւորութեան  
դէմ է : Նմանապէս եկեղեցական հա-  
մագումար ժողովի ներկայացուցած  
եպիսկոպոսական ցանկին ապօրինու-  
թիւնը ցոյց տուաւ, և վերջապէս պըն-  
դեց որ այս անկանոնութիւնները մին-  
չև որ չուղղուին, ոչ Մահմ. վերա-  
քննութիւնը կրնայ կատարուիլ, ոչ  
ալ պատրիարքին ընտրութիւն :

Ինչպէս որ Եփէնտի աւարկու-  
թեան շատեր ձայնակցեցան, նոյն  
իսկ ինքզինքնին ձախակողմեան ան-  
ւանող Զօյլեան խմբակին անդամ  
ներէն ոմանք ալ պարտաւորեցան ի-  
րաւունք տալ անոր աւարկութեանց  
մէկ քանիին :

Իզմիրեան Սթ. Մատթէոս վար-  
դապետը՝ Փաղ. Ժողովի ներկայա-  
ցուցած երգման ձևին վրայ գիտա-  
յութիւն ըրաւ, աւարկելով թէ ե-  
պիսկոպոս մը ինչպէս կրնայ ազա-  
դայ Մահմանագրութեան վրայ՝ այ-  
սինքն ինչ ըլլալ չ'իտցած քանի մը  
վրայ կանխէն երդնուր Համագու-  
մար ժողովի պատրաստած եպիսկո-  
պոսական ցանկին համար ալ ըսաւ  
թէ Համագումար ժողովի հարք մի-  
այն եկեղեցւոյ պատասխանատու են  
իրենց ըրածին համար :

Ետեւն Մամբրէ եպիսկոպոս խօսք  
ուղերով, նա ալ յարեց թէ Համա-  
գումար ժողովի հարք Աստուծոյ  
զատ ուրիշ ոչ մէկու պատասխանա-  
տու են :

Այս խօսքերը ըսած ժամանակին  
պահ մ'ընթացին իսկ Հոսի Գրորա-  
կանայի ժողովը կարծեցինք : Երես-  
փոխաններէն ոմանք բողոքեցին այս  
խօսքերուն դէմ իսկ Մամբրէ եպիս-

կոպոս Մահմանագր. տես-  
րակ մը ձեռքն առնելով՝ լիար քա-  
րող մը խօսեցաւ կրկ և օրինաց վը-  
րայ : Ընդհ. Ժողովը կոյր խուրդի  
նմանցուց, յետոյ երեսփոխանաց ո-  
մանց բողոքներուն վրայ ուշաբերելով  
ըսաւ թէ իր անձին համար միայն կը  
խօսէր, և հետզհետէ ներշնչուելով  
և Մահմանագրութեան տեսարակն ու-  
գին մէջ տատանելով, «մենք սակեց  
զատ օրէնք չենք ճանչնար, գուցէ  
այլ որ այս օրէնքը թերի կը գտնէ,  
պէտք է որ այս ժողովէն գուրս ել-  
նէ» : Վերջապէս Ինչպէս որ Եփէնտի  
հակառակ խօսած ըլլալու համար,  
իւր համարիչ Զօյլեաններն ալ ան-  
դուշելով պահանջեց որ ըստ ներկայ  
Մահմանագրութեան Պատրիարքին  
ընտրութիւնն անմիջապէս կատար-  
ուի :

Այս միջոցին քառորդի մը չափ  
գաղաւար տուելով, երբոր ատենը  
նորէն բացուեցաւ, գիւնիքեւն Ա. տե-  
նագրաւ Երեսփոխան Եփէնտին նախ  
գիւնիքեւն դէմ եղած քանի մ'ատենա-  
կութեանց պատասխանեց. երկրորդ  
Մամբրէ եպիսկոպոսին և Մատթէոս  
վարդապետին յայտարարութեանց  
պատասխանելով՝ ըսաւ թէ Համա-  
գումար ժողովը իր պատրաստած  
ցանկը տեղեկագրով Ընդհ. Ժողովի  
ներկայացուցելով՝ արդէն ճանչցած  
է Ընդհ. Ժողովի պատասխանատու  
ըլլալը :

Երբոր Երեսփոխան Եփէնտի խնդ-  
րոյն դաւանալով եղած վիճաբանու-  
թեանց եղբակացութիւն տալ կու-  
ղէր, քանի մ'երեսփոխանք առաջար-  
կեցին որ Մահմանագրութեան ար-  
դէն վերաքննեալ կէտերը շուտով  
Բ. Գոնէն վաւերացմանը ներկայաց-  
ւին Փաղ. Ժողովի ձեռք : Այս ա-  
ռաջարկութեան դէմ քանի մ'ե-  
րեսփոխանք բողոքեցին, ձայները  
բարձրացան. նոյն միջոցին ներկայ  
գանաւոր մեծախումբ ժողովրդեան  
մէջ ալ շուրջ մը ծագելով, աստեանը  
չփութեցաւ, աստեանակալ զանգակն  
անցնելի եղաւ, վերջապէս Գեր. Թա-  
ղմուս սրբազան ժողովրդեան շուրջ  
հանդարտեցնելու համար, յորդոր  
կարգաց որ երեսփոխանական ժողովը  
յարգելով թողուն որ իր պաշտօնը  
կատարէ յօգուտ և 'ի պատիւ Աղլին :

Այս յորդորին դէմ ժողովրդեան  
մէջէն ձայն մը բուռեցաւ, որ կըրէր-  
«Հերիք համբերեց աղբքանի տա-  
րի է 'ի վեր, դուք հոս ոչ թէ աղբքն  
օգուտը խորհելու, այլ ձեր կիւրքը  
յարգեցնելու նպատակ էր, ալ վատա-  
հալութիւն չուրէնք ձեր վրայ» : Այս խօս-  
քին վրայ բռնէ ծաղկազարութիւն  
մ'ըրաւ ժողովուրդը, և երեսփոխանք  
այս անակնկալ վարձապարտութեան ըս-  
տանալով մեկնիլ կ'աւան :

Գիւնիքեւն ալ որովհետեւ ժամը 10  
անցած էր, աստեանը գուցէ ծանու-  
ցանելով թէ յաւաքիկայ նիստն ապ-  
րիւ 12 ուրբաթ օրը պիտի գումարի :

Կը ընենք թէ բողոքական Հայոց  
աղբապետը խնդիր մատուցեր է Բ.  
Գոնէն, որպէս զի բողոքական հաս-  
տակութիւնը՝ «Հայաստանեայց Աւե-  
տարանական եկեղեցի» արտադրու-  
նէն ալ և այնպէս ճանաչուի պաշտո-  
նապէս :

Այս պահանջման վրայ աղբապետ  
վարչութեան ուշադրութիւնը կը հը-  
րաւերենք :

Գոնի մը պատուարժան աղբապետ  
կը յիշեցնեն մեզ թէ Համագումար  
ժողովի պատրաստած ցանկին գուրս  
թողուած եպիսկոպոսաց կարգէն են  
նաև Պատրիարքական նախկին տե-



